ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻՆ

Բողոք բերող թիվ ԵԿԴ/1524/02/12
քաղաքացիական գործով պատասխանող՝ «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցություն
Հասցե՝ ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3

Թիվ ԵԿԴ/1524/02/12 քաղաքացիական
գործով հայցվոր՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդհարկ

24.05.2013 թ.-ն

Վ Ճ Ռ Ա Բ Ե Կ Բ Ո Ղ Ո Ք

(Նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով)

Հարգելի՛ պալատ,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան) 02.05.2013 թ.-ին քննել է թիվ ԵԿԴ/1524/02/12 քաղաքացիական գործով բերված վերաքննիչ բողոքն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Հայաստանի Դեմոկրատական կուսակցության>> (այսուհետ՝ Կուսակցություն)՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու, փաստաբանի վարձատրության՝ 250.000 ՀՀ դրամ գումարի, նախապես վճարված պետական տուրքի՝ 4.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների մասին, և որոշել է բողոքը մերժել, իսկ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Ընդհանուր իրավասության դատարան) 2012 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ԵԿԴ/1524/02/12 վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

Դատարանի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները.

Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հոդվածների, 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Դատարանը չի կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, որը պարտավոր էր կիրառել:

Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 42-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ, 86-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» Միջազգային դաշնագրի (16 դեկտեմբեր 1966թ.) 14-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 48-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ, 227-րդ և 228-րդ հոդվածների դրույթները:

Նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները, գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները և դրանց հետևանքով գործի վերանայման հիմքերը.

Դատարանը թիվ ԵԿԴ/1524/02/12 որոշման (այսուհետ՝ Որոշում) «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.» մասում նշել է.

«Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից սույն քաղաքացիական գործով իրականացվել է ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, գործով ներկայացված բոլոր ապացույցները գնահատվել են իրենց համակցության մեջ, ինչի արդյունքում կայացվել է իրավաչափ դատական ակտ: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է գալիս հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ 25.04.2012 թվականի, այնուհետև 16.05.2012 թվականի գրությամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հարցում է կատարվել «Հայաստանի Դեմոկրատական կուսակցությանը»՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկատվությունը, այն է՝ 25.04.2012 թվականի դրությամբ Կուսակցությունը որքան գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար, ծախսած գումարից որքանն է կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը՝ կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը, Կուսակցությունը Կազմակերպության թե՛ 25.04.2012 թվականի, թե՛ 16.05.2012 թվականի հարցումներից և ոչ մեկին չի պատասխանել:

Ներկայումս Կազմակերպությունը դիմելով դատարան՝ պահանջել է պարտավորեցնել Կուսակցությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցված տեղեկությունը հետևյալի մասին.

1. 25.04.2012 թվականի դրությամբ Կուսակցությունը որքան գումար է ծախսել նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար:

2. Ծախսած գումարներից որքանն է կազմում կուսակցության սեփական միջոցները, որքանը՝ Կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումարը:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում

տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները, 2-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).

տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք.

հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.

հարցում՝ տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.

հրապարակում՝ տեղեկությունը մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը և մատչելի դարձնելը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը, իսկ 3-րդ մասի համաձայն՝ Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.
4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:
2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումն ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:
3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝
1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.
2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.
3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

Վերը նշված իրավանորմերի և սույն քաղաքացիական գործում առկա փաստական հանգամանքների համադրման արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Կազմակերպությունը, օգտվելով իր փնտրած տեղեկությանը ծանոթանալու իրավունքից, դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով փնտրել և հարցմամբ դիմելով տեղեկատվության տնօրինողին՝ պահանջել է որոշակի տեղեկություն, սակայն տեղեկատվություն տնօրինողը, տվյալ դեպքում Կուսակցությունը, որևէ կերպ չի արձագանքել վերը նշված թե' 25.04.2012 թվականի, թե' 16.05.2012 թվականի հարցումներին:

Այս պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանը դատաքննությամբ պարզելով, որ Կազմակերպության կողմից 25.04.2012թ.-ի գրությամբ հայցված տեղեկատվությունը համապատասխանել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, իսկ տվյալ գրության 2-րդ կետով ներկայացված, ինչպես նաև Կազմակերպության կողմից 16.05.2012թ.-ի գրությամբ կրկին պատասխանողից հայցված՝ հարցերին ի պատասխան տեղեկատվություն տրամադրելու մասին խնդրանքը պատասխանող կուսակցության կողմից գրավոր կերպով չի մերժվել, սակայն հայցվող տեղեկատվությունն առհասարակ չի տրամադրվել, հետևապես՝ տեղեկատվություն տրամադրելու խնդրանքը կուսակցության կողմից մերժվել է՝ այն առհասարակ չտրամադրվելու հիմքով, որ պատասխանող կուսակցությունը չունի որևէ հակափաստարկ ընդդեմ հայցով ներկայացված պահանջի ու պահանջվող տեղեկատվությունը տրամադրվելու իրավաչափության հարցի շուրջ, որ չի նշել, թե արդյոք հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվության մասով վերջինս սահմանափակված է այն ստանալու իրավունքից, ու որքանով է իրավաչափ իր՝ որպես տեղեկատվությունը առաջնահերթ տնօրինող սուբյեկտի, հայցվող տեղեկատվությունը տեղեկատվություն փնտրողին չտրամադրելու իր վարքագիծը, որ Կուսակցության՝ 25.04.2012թ. դրությամբ նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար ծախսված գումարի չափը, ինչպես նաև այդ գումարի մի

մասը կուսակցության սեփական միջոցները հանդիսանալու ու կուսակցությանը կատարված նվիրատվությունների գումար հանդիսանալու վերաբերյալ տեղեկությունները ստանալու տեղեկատվություն փնտրողի իրավունքները որևէ կերպ սահմանափակված չեն և ոչ մի իրավական նորմով, որ հայցվորի կողմից կրկնակի անգամ պահանջված տեղեկատվությունն օրենքի ուժով հանդիսանում է հրապարակման ենթակա, հետևապես՝ դրանք ենթակա են տրամադրման օրենքով սահմանված կերպով շահագրգիռ անձի կողմից օրենքով սահմանված կարգով նման տեղեկատվություն ստանալու հայցվող դիմումի առկայության դեպքում և այն էլ այն դեպքում, երբ տեղեկատվություն փնտրողը՝ սույն գործով հայցվորը, հանդիսանում է հասարակական կազմակերպություն, որ հայցվորի կողմից փնտրված տեղեկությունը պետք է ծառայեր կազմակերպության՝ հասարակության համար օգտակար նպատակին, ինչը համահունչ է կուսակցությունների՝ հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցելու գործունեություն ծավալելու հիմնական նպատակի հետ, որ կուսակցությունն ինքը պետք է դրսևորեր շահագրգռվածություն օրենքով սահմանված կարգով տրամադրելու հայցվող տեղեկությունը, որը պայմանավորված է նաև իր գործունեության հիմնական նպատակով, որ պատասխանողին ուղղված գրությունների մեջ վկայակոչված հարցերը հիմնավորելու որևէ պարտավորություն պատասխանող կողմը չէր կրում և պարտավոր չէր հայցվող տեղեկատվությունը փնտրել այլ մարմնից՝ անկախ այդ հնարավորության առկայության փաստից, քանի որ տեղեկատվություն փնտրողն ինքն է իր հայեցողությամբ որոշում թե' հայցվող տեղեկատվության բնույթը, թե' մարմինը, որը տնօրինում է հայցվող տեղեկատվությունը, իսկ օրենքն այս առումով որևէ սահմանակում չի նախատեսում, իրավացիորեն գտել է, որ Կազմակերպության հայցն ենթակա է բավարարման:

Վերը նշված պատճառաբանությամբ բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ Կուսակցությունը չի հանդիսացել և հանդիսանում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ, քանի որ Կուսակցությունը չի հանդիսանում, ոչ տեղեկություններ ունեցող պետական մարմին, ոչ տեղեկություններ ունեցող տեղական ինքնակառավարման մարմին, ոչ տեղեկություններ ունեցող պետական հիմնարկ, ինչպես նաև հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություն, հետևաբար էլ նա պարտավոր չի եղել հայցվորին տրամադրել նրա կողմից հարցվող տեղեկությունը, որ հայցվորը հնարավորություն է ունեցել իր կողմից հայցվող տեղեկատվությունն այլ տեղեկատվական աղբյուրից՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտից ստանալ, մասնավորապես՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից կամ էլ օգտվեր նրա պաշտոնական ինտերնետ կայք էջում հրապարակված տեղեկատվությունից, որ հայցվորը զրկված չի եղել փնտրվող տեղեկությունը Կուսակցության կողմից չտրամադրելու պարագայում այլ աղբյուրից ստանալու հնարավորությունից, Վերաքննիչ դատարանը գտնում է անհիմն, վերաքննիչ բողոքը բավարարելու ոչ բավարար հիմք, նկատի ունենալով նաև, որ տեղեկատվություն փնտրողը, տվյալ դեպքում Կազմակերպությունը, տեղեկություններ ունեցող Կուսակցությունից տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իր իրավունքը իրականացրել է տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով վերը նշված օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր հարցմամբ (դիմումով), իսկ դրա իրականացման ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում, որպիսի հանգամանքները տվյալ դեպքում առկա չեն:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ քննվող գործով հայցվորի կողմից 25.04.2012 թ.-ին և 16.05.2012 թ.-ին գրավոր դիմումներով պահանջված նույնաբովանդակ տեղեկատվությունն իր բնույթով չի հանդիսացել օրենքով տարածման ոչ ենթակա տեղեկատվություն, ավելին՝ այն հանդիսացել է Սահմանադրությամբ ու օրենքով սահմանված կերպով հրապարակվող տեղեկատվություն, սակայն տեղեկատվությունը չի տրամադրվել պատասխանողի կողմից՝ առանց որևէ պատճառաբանության, իսկ Օրենքի ուժով պատասխանողը պարտավոր էր տրամադրելու իր տնօրինության ներքո գտնվող ու հայցվող ամբողջ տեղեկությունները, որը բաց է հանրության համար, հետևապես՝ նաև օրենքով պաշտպանված չէ:»

Առերևույթ թվում է, թե Դատարանի կողմից կայացվել է պատճառաբանված և օրենքի պահանջներին համապատասխան որոշում, սակայն Որոշման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բնավ էլ Դատարանի պատճառաբանությունները չեն բխում Որոշման մեջ վկայակոչված ՀՀ օրենսդրության պահանջներից, ավելին ակնառու է դառնում այն, որ Դատարանը վկայակոչված օրենսդրության դրույթների սխալ մեկնաբանման արդյունքում թույլ է տվել նյութական իրավունքի նորմերի կոպիտ խախտում:

Դատարանի կողմից Որոշման մեջ վկայակոչվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, համաձայն որի՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից, իսկ քանի որ Դատարանի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից և ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ հոդվածներից բացի իրավական այլ ակտեր չեն վկայակոչվել անդրադարձ կկատարենք դրանց որպեսզի հիմնավորենք Դատարանի կողմից դրանց սխալ մեկնաբանման հանգամանքը:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված. Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Հոդվածը բացառապես սահմանում է անձի խոսքի ազատության իրավունքի մասին, որը ներառում է տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից, տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, որը բացի անձի նշված իրավունքից մեկ այլ անձի համար որևէ պարտավորություն չի սահմանում:

ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդված. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Հոդվածում սահմանվում է անձի ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում սահմանված իրավունքների իրականացման անձանց շրջանակը, թե ում կարող է նա նշված իրավունքների իրականացման համար դիմելու, ըստ որի անձն իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավունք ունի դիմելու իրավասու պետական և տեղական

ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց: Ակնհայտ է, որ Կուսակցությունը չի հանդիսանում, ոչ իրավասու պետական, ոչ տեղական ինքնակառավարման մարմին, ոչ էլ պաշտոնատար անձ: Հետևաբար, հայցվորն իր ՀՀ Սահմանադրության 27-րդ և 27.1-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրականացման համար չէր կարող դիմել Կուսակցությանը, քանի որ նշվածի արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ և 27.1-րդ հոդվածներով Կուսակցության համար որևէ պարտավորություն սահմանված չէ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Համանման դրույթ սահմանված է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասում. «Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, ինչպես նաև օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում՝ օրենսդրական այլ ակտերով: Պարտականությունների կատարման կարգը, պայմանները և ծավալը որոշում են օրենքով, իսկ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում՝ օրենսդրական այլ ակտերով:»

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված. Ըստ այս հոդվածի 1-ին մասի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները, իսկ 2-րդ մասն էլ սահմանում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակը, համաձայն որի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածվում է **պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա**:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասում նշված է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Եթե Դատարանի կողմից տառացի մեկնաբանվեր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթը, ապա մինչանակ կպարզեր, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները Կուսակցության համար հարցվող տեղեկությանը պատասխանելու որևէ պարտավորություն չեն սահմանում, քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում Կուսակցության վրա, հետևաբար չկա օրենքով սահմանված պարտավորություն, չկա նաև հարցվող տեղեկությանը պատասխանելու պարտավորություն:

Ճիշտ է Դատարանը Որոշման մեջ վկայակոչել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, այնուամենայնիվ նրա կողմից սխալ է մեկնաբանվել հոդվածում նշված հասկացությունների իմաստը, կամ առհասարակ դրանք չեն պարզաբանվել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում նշված հիմնական հասկացություններից առանձնացնենք հետևյալը՝

տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող

կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք.

հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.

հրապարակում՝ տեղեկությունը մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը և մատչելի դարձնելը:

Վերը նշված հիմնավորման արդյունքում պարզ դարձավ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում Կուսակցության վրա, այնուամենայնիվ Կուսակցության պարտավորությունների վերջնական բացառման համար պարզենք, արդյո՞ք Կուսակցությունը հանդիսացել է ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ, կամ հանրային նշանակության կազմակերպություն, թե ոչ:

Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի տեղեկատվություն տնօրինողներ հանդիսանում եմ միայն տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք:

Եվ այսպես Կուսակցությունը հարցվող ժամանակահատվածում չի հանդիսացել և հանդիսանում, ոչ՝

1. տեղեկություններ ունեցող պետական մարմին,
2. տեղեկություններ ունեցող տեղական ինքնակառավարման մարմին,
3. տեղեկություններ ունեցող պետական հիմնարկ,
4. բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն,
5. հանրային նշանակության կազմակերպություն կամ դրա պաշտոնատար անձ,
6. ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություն:

Այն, որ անձը կարող է տեղեկություն ունենալ, դեռևս բավարար չէ որպեսզի նա «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով համարվի տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ, հետևաբար, եթե անձը չի հանդիսանում ո՛չ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմին, ո՛չ պետական հիմնարկ, ո՛չ բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն, ո՛չ էլ հանրային նշանակության կազմակերպություն և դրա պաշտոնատար անձ, ապա նա չի կարող համարվել տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ և նրա վրա չի կարող տարածվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունները:

Նշվածը խոսում է այն հանգամանքի մասին, որ ոչ միայն Դատարանի կողմից է խախտվել վերոնշված նյութական իրավունքի նորմերը, այլև Ընդհանուր իրավասության, իսկ ցավալին այն է, որ Դատարանն ով կոչված է օրենքի տառի պահպանմամբ իրականացնել արդարադատություն, թույլ է տալիս կոպիտ խախտում:

Քանի որ բողոքում նշված հիմնավորումների արդունքում պարզ դարձավ Դատարանի կողմից Որոշման մեջ վկայակոչված օրենսդրության դրույթների սխալ կիրառման հանգամանքի մասին, ուստի միանշանակ կարելի է արձանագրել նաև այն, որ Դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտում թույլ տալու արդյունքում սխալ է մեկնաբանվել և կիրառվել նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածների դրույթները:

Անկասկած էական է այն հանգամանքը, որ Դատարանը պարտավոր էր պարզել, արդյո՞ք Կուսակցությունը հանդիսացել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված տեղեկատվություն տնօրինող սուբյեկտ, թե ոչ, հայցվորը զրկված է եղել փնտրվող տեղեկությունը Կուսակցության կողմից չտրամադրելու պարագայում այլ աղբյուրից ստանալու հնարավորությունից, թե ոչ, հայցվորի փնտրվող տեղեկությունը հրապարակված եղել է, թե ոչ, Կուսակցությունն ապահովել էր հայցվորի փնտրվող տեղեկության մատչելիությունը, թե ոչ, Կուսակցությունը պարտավոր է եղել հայցվորի կողմից պահանջվող տեղեկությունը տրամադրել նրան, թե ոչ, տար ՀՀ օրենսդրության պահանջներից բխող վերլուծություն և պատճառաբանություն, սակայն վարվել է ճիշտ հակառակ կերպ:

Բողոքում նշված վերլուծության արդյունքում հերքվում է Որոշման մեջ Դատարանի կողմից նշված «Վերը նշված իրավանորմերի և սույն քաղաքացիական գործում առկա փաստական հանգամանքների համադրման արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Կազմակերպությունը, օգտվելով իր փնտրած տեղեկությանը ծանոթանալու իրավունքից, դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով փնտրել և հարցմամբ դիմելով տեղեկատվության տնօրինողին՝ պահանջել է որոշակի տեղեկություն, սակայն տեղեկատվություն տնօրինողը, տվյալ դեպքում Կուսակցությունը,...» նախադասությունը, քանի որ բազմիցս նշեցինք, որ Կուսակցությունը չի հանդիսացել և հանդիսանում ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով տեղեկատվության տնօրինող սուբյեկտ:

Առհասարակ Դատարանի կողմից անտեսվել է նաև հետևյալ կարևոր հանգամանքները՝

1. այն, որ 06.05.2012 թ.-ին ՀՀ-ում տեղի է ունեցել ԱԺ համամասնական կարգով ընտրություններ, որը հանրահայտ հանգամանք է,
2. այն, որ ՀՀ-ում 06.05.2012 թ.-ին կայանալիք ԱԺ համամասնական կարգով ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն պարտավոր է եղել սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնել համապատասխան տեղեկատվություն կուսակցության ֆինանսական և գույքային միջոցների, ինչպես նաև նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ, դա ևս հանրահայտ հանգամանք է,
3. այն, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված տեղեկատվությունը հրապարակել է իր պաշտոնական ինտերնետ կայք էջում՝ (http://www.elections.am/hayt2012, և http://www.elections.am/audit2012), դա ևս անհերքելի և հանրահայտ հանգամանք է:

Այսպիսով, Կուսակցությունը մասնակցելով ՀՀ-ում 06.05.2012 թ.-ին կայանալիք ԱԺ համամասնական կարգով ընտրություններին 2012 թ.-ի ապրիլ ամսվա վերջերին հայցվորի կողմից փնտրվող տեղեկությունը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, իսկ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն էլ հայցվորի կողմից

փնտրվող տեղեկությունը հրապարակել է իր պաշտոնական ինտերնետ կայք էջում՝ (http://www.elections.am/hayt2012, և http://www.elections.am/audit2012):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանրահայտ հանգամանքներն ապացուցման կարիք չունեն:

Նշված հանգամանքի հանրահայտ լինելու վերաբերյալ տեղյակ է եղել ինչպես հայցվորը, այնպես էլ Դատարանը: Ավելին, Ընդհանուր իրավասության դատարանը դատաքննության ժամանակ փաստել է, որ նման տեղեկատվությունը եղել է բաց և հասանելի, իսկ հայցվորն էլ հայտնել, որ հարցվող տեղեկությունը ստանալու համար չի դիմել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, իսկ Դատարանի կողմից այս հանգամանքի վերաբերյալ չի տրվել արժանի գնահատական:

Ակնհայտ է, որ հայցվորը միանշանակ հնարավորություն է ունեցել իր կողմից հարցվող տեղեկատվությունն այլ տեղեկատվական աղբյուրից՝ տեղեկատվություն տնօրինող սուբյեկտից, ստանար, մասնավորապես ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից կամ էլ օգտվեր նրա պաշտոնական ինտերնետ կայք էջում (http://www.elections.am/hayt2012, և http://www.elections.am/audit2012) հրապարակված տեղեկատվությունից:

Ի դեպ նշենք, որ վերոգրյալի մասին Կուսակցության աշխատակիցների կողմից հայտնվել է հայցվորին, որ իր կողմից հարցվող տեղեկատվությունը տրամադրված է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որն էլ այդ տեղեկատվությունը հրապարակել է իր պաշտոնական ինտերնետ կայք էջում՝ (http://www.elections.am/hayt2012, և http://www.elections.am/audit2012), որի մասին պարզ և հասկանալի պատճառով լռում է հայցվորը:

Ավելին, եթե պայմանականորեն ընդունենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով անձին ընձեռվում է տեղեկատվություն փնտրելու իրավունք, այնուամենայնիվ նա պարտավոր է իր այդ իրավունքից օգտվել բարեխղճորեն, այլ ոչ թե դրսևորել իրավունքի չարաշահում, ինչը բնականաբար չի կարելի ասել հայցվորի մասին: Այս իրավիճակի զավեշտը կայանում է նրանում, որ հայցվորի կողմից ներկայացված հարցումը կրել է ձևական բնույթ, քանի որ իր կողմից հարցվող տեղեկությունը եղել է հրապարակված, իսկ նա չգիտես ինչու ցանկացել է ստանալ հարցվող օրվա և ժամի դրությամբ Կուսակցության կողմից կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը: Իսկ Ընդհանուր իրավասության Դատարանի կողմից անհասկանալի տրամաբանությամբ անտեսվել է այս ակնառու անհեթեթ և էական նշանակություն ունեցող հանգամանքը, որին իր պատշաճ գնահատականը չի տվել Դատարանը:

Այսպիսով միանշանակ է, որ՝

1. հայցվորը զրկված չի եղել փնտրվող տեղեկությունը Կուսակցության կողմից չտրամադրելու պարագայում այլ աղբյուրից ստանալու հնարավորությունից,
2. հայցվորն իր կողմից փնտրվող տեղեկության հրապարակված լինելու մասին տեղյակ է եղել, ինչպես նաև հավելյալ այդ մասին նրան բանավոր կերպով տեղեկացվել է Կուսակցության համապատասխան աշխատակցի կողմից,
3. Կուսակցությունն ապահովել էր հայցվորի կողմից փնտրվող տեղեկության մատչելիությունը:

Ակնհայտ է այն էական նշանակություն ունեցող հանգամանքը, որ եթե հայցվորն իրականում ցանկացել է ստանալ իր կողմից փնտրվող տեղեկությունը, ապա ցանկության դեպքում նա կարող էր ստանալ այն, քանի որ իր կողմից փնտրվող տեղեկությունը եղել է բաց և հասանելի, որովհետև հրապարակված էր:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է «հրապարակում» բառի իմաստը, որը նշանակում է՝ տեղեկությունը մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը և մատչելի դարձնելը:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, արդյո՞ք Կուսակցությունը պարտավոր է եղել հայցվորի կողմից պահանջվող տեղեկությունը տրամադրել նրան, թե ոչ, ապա նշենք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, ըստ որի՝

«Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.

2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:»

Անհերքելի է այն, որ հայցվորի կողմից հարցվող տեղեկությունը չի վերաբերվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասում նշվածներից և ոչ մեկին, հետևաբար Կուսակցությունը զրկված չի եղել հայցվորին իր կողմից հարցվող տեղեկատվության չտրամադրման իրավունքից: Ուստի Կուսակցությունը հայցվորին չտրամադրելով նրա կողմից հարցվող տեղեկատվությունը թույլ չի տվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի խախտում:

Ուղղակի անհիմն է Դատարանի վերաքննիչ բողոքում նշված.

«18.09.2012 թ.-ին նշանակված նախնական նիստին որպես Կուսակցության ներկայացուցիչ ներկայացել է Սուրեն Մովսիսյանը, ով այդ ժամանակ չի ունեցել լիազորագիր և զրկված է եղել ներկայացնելու Կուսակցության շահերը և ներկայացված հայցադիմումի վերաբերյալ Կուսակցության առարկությունները, իսկ 12.12.2012 թ.-ի ժամը 15.00-ին կայանալիք դատական նիստին սահմանված ժամին լիազորագրով ներկայացել է Դատարան, սակայն դատական նիստը Դատարանի կողմից չի բացվել:

12.12.2012 թ.-ին նշանակված դատական նիստը կայացած չլինելու հանգամանքի վառ ապացույց է հանդիսանում Կուսակցության 15.01.2013 թ.-իթիվ ԵԿԴ/1524/02/12 քաղաքացիական գործով կայացած բոլոր դատական նիստերի արձանագրությունների համակարգչային արձանագրման կրիչը տրամադրելու դիմումի հիման վրա Դատարանի կողմից տրամադրված կրիչը, որտեղ առկա են բացառապես 18.09.2012 թ.-ի և 30.10.2012 թ.-ի դատական նիստերի արձանագրությունների ձայնագրությունները:

Այս հանգամանքով կարելի է արձանագրել, որ Դատարանն իրականում չի կիրառել Վճռում վկայակոչած ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 42-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» Միջազգային դաշնագրի (16 դեկտեմբեր 1966թ.) 14-րդ հոդվածի դրույթները, այլև ընդհակառակը, խախտել է

դրանց պահանջները:» հանգամանքի վերաբերյալ կատարված վերլուծությունը, ինչը մեկ անգամ ևս փաստում է այն հանգամանքի մասին, որ Դատարանի կողմից անհիմն կերպով անտեսվել են Կուսակցության կողմից վկայակոչված բոլոր փաստերն ու հիմնավորումները:

Վերոգրյալը հիմնավորում է Դատարանի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների հանգամանքը:

Ամբողջացնելով վերոգրյալը միանշանակ կարելի է արձանագրել, որ Կուսակցության կողմից թույլ չի տրվել Որոշման և վճռում նշված և ոչ մի նորմատիվ իրավական ակտի աննշան խախտում, ինչի արդյունքում էլ ակնհայտ է, որ հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումն ամբողջությամբ անհիմն ու առարկայազուրկ է, ինչը նշանակում է, որ նրա կողմից կատարված դատական ծախսերը եղել են ոչ իրավաչափ և անտեղի, ուստի Դատարանը պարտավոր էր թույլ չտար նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ և պարտավոր էր հայցադիմումն ամբողջությամբ մերժելու մասին որոշում կայացներ, իսկ դատական ծախսերի հարցը համարեր անհիմն:

Վճռաբեկ բողոքում նշվածի արդյունքում անհերքելի է մի պարզ հանգամանք, որ Դատարանի կողմից Որոշման մեջ նշված բոլոր փաստարկներն ու վերլուծություններն անհիմն են և առարկայազուրկ:

ԵՎ այսպես, վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն բողոքում նշված իրավական նորմերը Դատարանի կողմից խախտելու հիմնավորումները և այն, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով կայացվելիք որոշումը միանշանակ կարող է էական նշանակություն ունենալ սույն գործի ելքի վրա, և օրենքի միատեսակ կիրառության համար:

Ելնելով վերոգրյալից և համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ, 227-րդ, 228-րդ, 231-րդ և 240-րդ հոդվածներով՝

խնդրում եմ

վճռաբեկ բողոքը բավարարել՝ բեկանել թիվ ԵԿԴ/1524/02/12 որոշումը և փոփոխել այն՝ կայացնել նոր՝ հայցադիմումն ամբողջությամբ մերժելու մասին, դատական ակտ:

Կից ներկայացնում եմ՝

1. պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը,
2. վճռաբեկ բողոքը հայցվորին և Դատարանին ուղարկելու փոստային անդորրագրերի բնօրինակները:

Բողոք բերող, թիվԵԿԴ/1524/02/12 քաղաքացիական գործով պատասխանող Կուսակցության նախագահ՝ Արամ Սարգսյան